

ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ԲԱՐԲԱՌԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՎՐԵՆՏԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ, ՇՈՂԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Ղարաբաղի (Արցախ) բարբառ, Լ. Հովհաննիսյան, գրաբար, իրանական լեզուներ, հնչյունական համակարգ, բառապաշար, քերականական համակարգ, փոխառություն, ստուգաբանություն, հնաբանություն:

Նախաբան

Արդի հայ նշանավոր լեզվաբան, բ. գ. դ. պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանն այն գիտնականներից է, որ ամբողջովին նվիրվեց հայագիտությանը՝ դրան ծառայեցնելով գիտական միտքն ու նվաճումները, իր ողջ գործունեությունը: Նրա գիտական գործունեության թեմատիկան ունի մի քանի ուղղություններ¹, որոնցից հատկապես կարևոր են.

ա) գրաբարի քերականության, բառապաշարի ծագումնաբանական շերտերի ու իմաստային խմբերի, նաև V դարի թարգմանական գրականության բառապաշարի քննությունը,

բ) հայ-իրանական լեզվական առնչությունների քննությունը,

գ) պատմական բարբառագիտությունը, որին անդրադառնալու համար հիմք ստեղծեցին գրաբարի բառապաշարի ուսումնասիրությունը և հայ-իրանական լեզվական առնչությունների վերհանումը:

Լ. Հովհաննիսյանն իր գիտական գործունեության առաջնահերթ խնդիրներից մեկը համարեց մայրենի՝ Ղարաբաղի (Արցախի) բարբառի ուսումնասիրությունը, վերջինիս ու գրաբարի միջև գոյություն ունեցող հնչյունական, բառային ու քերականական բազմաթիվ իրողությունների բացահայտումը: Պատմական բարբառագիտության բնագավառում նրա կատարած ուսումնասիրությունների² նպատակն ու հետևանքը եղան Արցախի տարածքում հայերենի վաղնջական գործածության, հայոց լեզվի կազմավորման շրջանից այդ տարածքի հայախոս լինելու փաստի անհերքելիության ապացուցումը:

Լ. Հովհաննիսյանի՝ Ղարաբաղի բարբառին նվիրված ուսումնասիրությունները վերաբերում են.

* Ներկայացվել է 24. VII. 2024 թ., գրախոսվել է 29. VII. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:

¹ Խ ա չ ա տ ր յ ա ն. 2014, 232–236:

² Հ ո վ հ ա ն Ն ի ս յ ա ն. 1977, 1979, 1990, 1999, 2000, 203–213, 2014, 2017, 2020, 2021, 2022, 2023ա, 2023բ, 2023գ, 2024:

Բարբառի հնչյունական որոշ փաստեր Լ. Հովհաննիսյանը համարում է հնագույն բարբառային արտահայտություններ, որոնք կարող են լինել երկու տեսակի՝ գրաբարում ավանդված զուգահեռ ձևերից մեկի առկայությունը և գրաբարում չավանդված հնդեվրոպական կամ հին բարբառային արտահայտություններ: Այսպես, գրաբարյան այ-ի փոխարեն է ունեն հայերենի մի շարք բարբառներ: Ղարաբաղի բարբառը նման համապատասխանություն ունի այն բառերում, որոնցում կատարվել է ձայնեղների խլացում, ինչպես՝ եղբայր-ախպէր, ձայն-ծէն և այլն: Բայց նման հնչյունափոխության կողքին բարբառում առկա է այ-ա/ւ հնչյունափոխությունն այն բառերում, որոնք ավելի հին են, օրինակ՝ Հայր - Հւր, մայրի - մարի, փայտ - փաւ և այլն: Սրանից հեղինակը եզրակացնում է, որ այ-է-ն բարբառում կատարվել է գրաբարյան ձայնեղների խլացումից հետո կամ նրան զուգահեռ. երկու դեպքում էլ այն հետագա շրջանի արդյունք է, քանի որ բարբառում ձայնեղների խլացումն ավարտվել է IX-XIII դարերում: Մինչդեռ այ-ի դիմաց ա/ւ-ով ձևերը կամ այ-ին զուգահեռ ձևեր են, կամ երկհնչյունի պարզեցման արդյունք, գործընթաց, որը նախորդել է այ-է-ին՝

Հետագայում Լ. Հովհաննիսյանի կողմից մի շարք նոր իրողություններով լրացվել են բարբառի հնչյունական-հնչյունափոխական հնաբանությունները, որոնք փաստում են բարբառի՝ հնդեվրոպական հիմք լեզվի հետ ընդհանրություն ունենալը, ինչպես, օրինակ, գրաբարյան ու-ի դիմաց օ-ի առկայությունը՝ հ.-ե. tor- գրբ. թուր, բրբռ. թոր, հ.-ե. dom, գրբ. տուն, բրբռ. տոն¹⁰:

Գրաբարի ու բարբառի հնչյունական համապատասխանությունը շեշտվում է նաև Ֆ հնչյուն չունենալու հանգամանքով, իսկ այն, որ բարբառում շեշտակիր է վերջընթեր վանկը, խոսում է դարձյալ բարբառի ու գրաբարի հին առնչությունների մասին¹¹:

Ղարաբաղի բարբառի բառային իրողությունների քննությունը

Հաշվի առնելով, որ հայոց լեզվի պատմական բառագիտության համակողմանի ուսումնասիրություններին մեծապես նպաստում են հայերենի բարբառների տվյալները, և այդ առումով կարևորելով հատկապես Ղարաբաղի բարբառը՝ որպես տարածքային ընդգրկումով ու բարբառախոսների թվով առաջնային՝ Լ. Հովհաննիսյանը հատուկ ուշադրություն է դարձրել բարբառի բառապաշարի քննությանը: Նրա կողմից կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բարբառի բառապաշարի բազմաթիվ միավորներ ուշագրավ են ծագումնաբանական, բառիմաստային, իմաստափոխության և բառակազմության տեսանկյունից: Բնականաբար, նա առաջին հերթին ուշադրություն է դարձրել բարբառի հնդեվրոպական տարրերի բացահայտմանն ու քննությանը, ապա միայն գրաբար-բարբառ առնչակցության պարզաբանմանը:

⁹ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 148:

¹⁰ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 11:

¹¹ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 151:

Լինելով հայերենի՝ որպես հնդեվրոպական լեզուներից մեկի տարածքային տարբերակ՝ Ղարաբաղի բարբառը պահել է հնդեվրոպական ծագումով բազմաթիվ բառեր ու իրողություններ, որոնց զգալի մասը ժառանգել է գրաբարից: Որպես գրաբարում չավանդված հնաբանություն՝ նշվում է ձայնդարձը, որի մի շարք ցայտուն օրինակներ առկա են բարբառում՝ խաչ-խէչ/ակ/, շեշտ-շաշտ/ին/, քերթ-քարթ/էղ/¹²:

Պատմական Արցախի տարածքում հայերենի՝ վաղնջական շրջանից կիրառվել են ապացուցելու համար հեղինակը բերում է գրաբարի արտասանությունը հարազատորեն պահած մի շարք բառեր՝ յէխնէլ, յըղէ, յուպուպ, յէտ, որոնք բառասկզբում պահել են յ-ի արտասանությունը: Ինչպես նշում է նա, բառային հնաբանություն պիտի համարել նաև գրաբարյան հ-ի դիմաց բարբառում վ ունենալը՝ հող-վըղ, հոտ-վըտ, հոր-վըր, որոնք հին բարբառային տարբերակներ են¹³:

Փորձելով առանձնացնել հնդեվրոպական ծագում ենթադրող այն բառերը, որոնք ավանդված չեն գրաբարում կամ գրաբարի համապատասխան միավորի նկատմամբ դրսևորում են որոշ ձևակառուցվածքային յուրահատկություններ՝ Լ. Հովհաննիսյանը լրացրել է լեզվաբան Գևորգ Զահուկյանի կողմից առանձնացված ու Ղարաբաղի բարբառին վերաբերող բառացանկը՝ այս «մայր, տատ», անգլի «բարակ, նիհար», լակ «հոտած», թոռ «թարմ», չալ «խաղողի ճյուղ», մըղմօղ «ցեց» և այլն¹⁴: Հետագայում ավելացվել են անգլի «մայր, ագգականուհի», դօն «խորք», լէթված «երես առած», խըրթըօլ «չնչափող», ծօռնը «թոռան զավակ», կ'էփ «պարանի ծայրը անցկացնելու կեռ փայտ», կ'օք /տալ/ «համոզել», կօռնը «թոռան թոռ», հասի «տարեց ագգականուհի», շէկէլ «հարվածել», պըլօրը /տանել/ «անեծք է», պըլ «գիժ, կոկարար», չալ /անել/ «տարածել», սըլէթա «երես առած», սըտ «տեղյակ, իրազեկ», տըհանիլ «հեալ, չնչասպառ լինել» բառերը¹⁵, նաև տալ «ճյուղ», լըմլամէլ «ծամել», շըքըռէլ «ոտքերը լայն բացել», շըկակէլ «արագ վազել» և այլն¹⁶: Ըստ լեզվաբանի հաշվումների՝ Ղարաբաղի բարբառում գործածվող հնդեվրոպական ծագում ունեցող մոտ հարյուր բառ գրաբարում վկայված չէ¹⁷: Քաջատեղյակ լինելով քննվող կարգի բառերի՝ տարբեր լեզվաբանների կողմից արված ստուգաբանություններին՝ նա լրացնում է ստուգաբանված բառերի շարքը նոր բառերով՝ իստ, լպուշ, հէնթի, տէղակ և այլն¹⁸: Հաշվի առնելով, որ բարբառի գրաբարում չավանդված հնդեվրոպական ծագմամբ բառերը շատ ավելին են բացահայտվածներից՝ անվանի լեզվաբանը, շարունակելով իր ուսումնասիրությունները, հետագայում ներկայացրել է նոր բառեր իրենց ստուգաբանություններով՝ անլանգա՝ «ծուլ, դանդաղաշարժ», թաթըռալ/թաթըռալ /գործածվում է կապակցություններում թաթըռալ անել «թուջունների բեղմնավորվելը», լալ

¹² Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1979, 52:

¹³ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1979, 57, 59:

¹⁴ Զ ա հ ու կ յ ա ն. 1972, 248–330:

¹⁵ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2000, 118.

¹⁶ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1979, 54, 56:

¹⁷ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2023դ, 45:

¹⁸ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2023դ, 46–47:

«Հորդ անձրև», լաբ «մարդ, ածու», լրբըռչան/լրկըռչան «սայթաքուն, ցեխոտ», չալ «խաղողի վազի չիվ», պէկ «ավերված, քանդված տեղ», ցալքուն «ցայտ»¹⁹, դարյա «համբերատար, մեծահոգի», կըլտի «թոթովախոս, թլվատ», հոլչտ «խրտնեցնելու բացականչություն», մըկըծըռնը «սկյուռ», քընըծահար «հանդիմանական խոսք՝ ուղղված սխալ, միամիտ, տարօրինակ, ոչ տեղին բան անողին, ասողին»²⁰:

Գրաբար–բարբառ առնչակցության պարզաբանումը ևս եղել է Լ. Հովհաննիսյանի ուշադրության կենտրոնում: Գրաբարի ու բարբառի բառապաշարային ընդհանրություններն ընդգծելու համար նա ներկայացնում է գրաբարյան այնպիսի բառեր, որոնք արդի հայերենում չեն գործածվում կամ սակավադեպ են, բայց բարբառում հաճախական են, ինչպես՝ ակն, աղազ «ճանապարհ», բառնալ, բլչանալ, բոլոր «կոր», բոյլ «գունդ», գիջ «խոնավ», գիլ, գատ, թավթուկ «կենդանու առջևի ոտք», թակն, թափուր, թումբ, խաւար, խոզան «չհերկված, անվար մնացած արտ», կապար «փշոտ գետնատարած բույս», կեմ «խոտե պարան», կոյս «կողմ», հազազ «չունչ», հանգիստ «գերեզման», մարի, մուն «միջատ», նիզ, շինամէջ, սամիթ, սերեկ «կաշվե կափարիչ», վարս, տուտոն, տոխալ, փոկ «կաշվե թել», քթոց²¹: Նրա ստուգաբանությամբ բացահայտվել են նաև բարբառում գործածական հինհայերենյան բառեր, որոնցից մի քանիսն ունեն հնդեվրոպական ծագում, արդի գրական հայերենում չեն գործածվում կամ նվազ գործածություն ունեն, ինչպես՝ պուտ «ուտելիք» բուտ արմատից, որից արդի գրական հայերենում գործածվում է բուել բառը, բարբառում՝ պուլթիլ, կէլ «վերքի փառ», որ գրական հայերենում հանդես է գալիս որպես բարդ բառի բաղադրիչ՝ քաղցկեղ, նորէլ՝ բարբառում գործածվում է գրաբարյան իմաստով՝ նորոգել, որը բացակայում է գրական հայերենում²²:

Հետաքրքիր է լեզվաբանի կողմից այնպիսի բառերի բացահայտումը, որոնք բարբառում գործածվում են գրաբարյան նույն բառի իմաստային նրբերանգներով: Օրինակ՝ գրաբարյան անսկիւն բառի «մի կողմ, ծայր» իմաստը, տանիւմ բառի «տեղավորել, պարունակել» իմաստը գործածական են նաև բարբառում²³:

Լ. Հովհաննիսյանն առանձին ուշադրություն է դարձրել Ղարաբաղի բարբառի բառակազմական հնաբանություններին, որոնց բացահայտման համար կատարել է գրաբար–բարբառ համապատասխան իրողությունների զուգադրական քննություն՝ արդյունքում նշելով էական մի քանի զուգահեռներ.

ա) գ (գըրթաթիլ, գինքժ, գէրթուն), ընդ (ընդետանս, թօնը /ընդ+ուր/, տ ուր ուր /ընդ իրեար/), ի (կըլխըվէր, պըրտիյէր, պըրտըտոլս, մըտըմօտ) նախդիրներով կազմություններ, բ) կալ արմատով կազմություններ (թըրքակալ, թըփըկալիլ, չըքըրկալիլ, պոլնակալ), գ) հար արմատով կազմություններ (պըցըհար, քամհար, ծիրքըհարիլ, պիրինհարէնք, փուրըհարէնք), դ) հնաբանությունների

¹⁹ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 14–18:

²⁰ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 44–54:

²¹ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 141–142:

²² Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1979, 54:

²³ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1979, 57:

այլ դրսևորումներ՝ թերթի փոխարեն թեր, որն ավելի հարազատ է հնդեվրոպական նախաձևին, այդ արմատը էքսկուց բառում²⁴, ե) վերջնահանգ ն-ով բառեր. չնայած հնդեվրոպական ծագում ունեցող մի շարք բառեր գրաբարում և բարբառում բառավերջում են ունեն, սակայն, համակարծիք լինելով Մ. Աղաբեկյանի հետ²⁵, Լ. Հովհաննիսյանը պնդում է, որ ն-ի հավելումը բարբառը ժառանգել է ոչ թե գրաբարից, այլ հնագույն հայերենից, ինչը հաստատվում է նաև ազգակցություն ցույց տվող իմաստային խմբի բառաշարքում գրաբարյան միայն թոռն բառից բացի բարբառում առկա ծոռնը «թոռան զավակ», կոռնը «թոռան թոռ», առնը «թոռան թոռան զավակ» բառերի գոյությունը²⁶:

Ներկայացվում են նաև գրաբարյան բազմաթիվ ոճեր, որոնք բարբառը պահել է նույն իմաստով, ինչպես՝ անցանել ընդ քուն – քննալ ընցընել, անկանել յուղի – հըղէ ընգընել, անկանել ի մտաց – մըննան ընգընել, աչք ածել – աշկ ածել «փնտրել», կալ աչաց – աշկէրը կալվիլ «կուրանալ», յոտն կաց – վըննը կաց, յոտաց – վէտէց «ոտքի վրա»²⁷:

Ղարաբաղի բարբառի իրանական փոխառությունների քննությունը

Ղարաբաղի բարբառի իրանական փոխառություններին Լ. Հովհաննիսյանն անդրադառնում է որոշ հոգվածներում²⁸: Հաշվի առնելով միջին իրանական լեզուների ու պարսկերենի հնչյունական-հնչյունափոխական առանձնահատկությունները և Ղարաբաղի բարբառի հնչյունական որոշ յուրահատկություններ, հատկապես՝ գրաբարյան բ, գ, դ, ձ, ջ ձայնեղների՝ պ, կ, տ, ծ, ճ խուլների վերածվելու երևույթը՝ լեզվաբանը քննում է բարբառում գործածվող միջին իրանական լեզուներից կատարված մի շարք փոխառություններ, ինչպես՝ ասպ/ը/, դոլձման, թալակ, լոլակ, կըռօճ, հըրիշտրակ, նըշան, նըշանց /տալ/, տէնգ¹, տըրիճակ, տօշ²⁹: Ըստ նրա՝ հնչյունակազմով կամ իմաստով հին կամ միջին իրանական լեզուներին են հարում նաև բարբառի մի շարք այլ բառեր՝ աշկարա, թառ, կէզան, հաթգանկ, հըրակաշ, պըտըրհան, վըռազ, ինչպես նաև նի մասնիկով այնպիսի կազմություններ, որոնցում նի-ի ներս-ից առաջացած լինելը խիստ կասկածելի է, ինչպես՝ նի թակել, նի կապել, նի կէնալ, նի կըցընել, նի կ¹ալ, նի պըրանել և այլն³⁰: Ներկայացրած իրողությունները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ իրանական փոխառությունների գործընթացը համընկնում է ընդհանրապես հայերենի իրանական փոխառությունների գործընթացին, որը կողմնակի ապացույց է Ղարաբաղի (Արցախի) տարածքում հայերենի վաղնջական գործածության: Բացի այդ, ըստ լեզվաբանի՝ հայ բարբառների մանրագնին ուսումնասիրությունը կարող է բացահայտել հին փոխառությունների մի զգալի շերտ, որը կա-

²⁴ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2020, 100–105:

²⁵ Ա ղ ա բ ե կ յ ա ն. 2010, 124:

²⁶ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 24:

²⁷ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 147:

²⁸ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1990, 65–70, 2014, 62–67:

²⁹ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2014, 62–67:

³⁰ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1990, 65–67:

րող է նպաստել միջին իրանական լեզուներում գրավոր չավանդված բառերի կամ բառամաստների վերականգնմանը³¹:

Ղարաբաղի բարբառի քերականական իրողությունների քննությունը Տարբեր լեզուների կամ միևնույն լեզվի տարբեր շրջանների միջև ընդհանրությունների գոյություն լավագույն փաստերը քերականական իրողություններն են: Բարբառի քերականական իրողությունները քննելիս Լ. Հովհաննիսյանն անդրադառնում է հետևյալ երևույթներին:

1. Գրաբարի թվականների համակարգից բարբառը պահել է մին (ոչ թե մեկ) և չօրք (չորս ձևի հետ) քանակական թվականները³²: Պահպանվել են նաև անձներական թվականները՝ երկուքեան, երեքեան, չորեքեան, բարբառում ըրկօքան, իրէքան, չուրէքան³³: Հայերենի բարբառներից անձներական թվականները պահպանվել են միայն Արցախի ու Մեղրու բարբառներում: Ու քանի որ դրանք կիրառվել են նախագրային շրջանից շատ ավելի վաղ, ուստի դա հնարավորություն է տալիս լեզվաբանին ենթադրելու, որ գրաբարի ու բարբառի անձներական թվականները նախագրային շրջանի կազմություններ են, և բարբառային ձևերը գրաբարյան ժառանգությունն չեն³⁴: Նա հնաբանություն է համարում նաև հարյուր և հազար թվականների «շատ, բազմաթիվ» նշանակությամբ գործածությունը³⁵:

2. Հոլովական համակարգում որպես հնաբանություն նշվում է գործիական հոլովի -ալ մասնիկը, որի ծագումը կապվում է ոչ թե ժամանակակից հայերենի -ով-ի, այլ գրաբարի աւ- ի հետ³⁶: Պահպանվել են նաև գրաբարյան հոգնակի գործիականի աւք-ը մի շարք բառերում՝ ծէուք, աչուք³⁷, զարտուղի հոլովման մի շարք բառերի սեռական և տրական հոլովաձևերը՝ գրք. հայր – սեռ. հոր, բրբռ. հօր, մայր – մոր, բրբռ. մօր, եղբայր – եղբար, բրբռ. ավսպօր³⁸: Լ. Հովհաննիսյանն ակնհայտ նմանություն է տեսնում նաև գրք. տէր – տեառն և բրբռ. տար – տրունը, տրունանը ձևերի միջև³⁹: Որպես հոլովական համակարգի հնաբանություն՝ նա ներկայացնում է հոգնակի ուղղականի ք-ն՝ տրղէրք, ըխճիգէք, հոգնակի սեռականի ց-ն՝ ավսպօրց, քրվօրց, պարառականի հետքերը՝ զիրալ⁴⁰:

3. Դերանուն խոսքի մասի համակարգի հնաբանություններից են ըստի/խստի, ըտի/խտի, ընդի/ինդի ցուցականները, որոնք գրաբարի աստի, անդի բառերի բարբառային արտահայտություններն են, նաև՝ հրսէք, հրտէք, հրնէք

³¹ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1990, 69:

³² Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 143:

³³ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 144:

³⁴ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2022, 72:

³⁵ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2022, 69:

³⁶ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2023ա, 91:

³⁷ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 146:

³⁸ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 26–27:

³⁹ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 146:

⁴⁰ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 146:

ցուցականները, որը լեզվաբանը համարում է գրաբարյան ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ⁴¹ դերանունների բարբառային տարբերակներ⁴²:

4. Բայական համակարգի հնաբանություններից են ի խոնարհման մեծաքանակ բայերի պահպանումը բարբառում՝ կ'իբիլ, պիբիլ, սըվէրիլ⁴³, ի-ով ապառնիի առկայությունը՝ ըսէլի, կ'իբիլի, ուտէլի⁴⁴, հնդեվրոպական արմատներով կազմված բայերի գոյությունը՝ բիբիլալ, էթվիլ, լիսկլիսկալ, լիկլիսկվէլ, լիսկվէլ, լիկլիսկիլ, կլիկվէլ, շէկվէլ, շիկվէլ և այլն⁴⁵, նաև ենթակայական դերբայի ընդհանուր ող վերջավորությունը գրաբարում և բարբառում⁴⁶, անկանոն բայերի խոնարհման մի շարք ընդհանրություններ գրաբարի հետ՝ գրբ. տալ – տուայ, տուար, տուաւ, տուաք, տուայք, տուան – բրբռ. տուվէ, տուվէր, տուվալ, տուվէք, տուվէն, գրբ. ունել – կալայ, կալար, կալաւ, կալաք, կալայք, կալան, բրբռ. օնէլ – կալի, կալիր, կալալ, կալինք, կալիք, կալին, գրբ. առնել «անել, կատարել» բայի բուն հրամայականը՝ արա՛ – արարէք, բրբռ. անէլ – ըրա՛, ըրէք⁴⁷:

5. Մակբայ խոսքի մասին պատկանող հնաբանությունները իրականում ոչ թե քերականական, այլ բառային իրողություններ են: Այդպիսի բառերից է. Հովհաննիսյանը բերում է հետևյալ օրինակները՝ գիրթ «կտրուկ», մըղմըղ «մարմանդ», շրկակած «սրընթաց», հերու «անցյալ տարի» և այլն⁴⁸:

Ղարաբաղի բարբառին վերաբերող և առնչվող այլ աշխատանքներ

Իր գիտական գործունեության ողջ ընթացքում ուշադրության կենտրոնում պահելով Ղարաբաղի (Արցախի) բարբառը՝ բազմալստաակ հայերենագետը կատարել է նաև վերջինիս վերաբերող և առնչվող այլ աշխատանքներ. խմբագրել է Արմեն Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարան»⁴⁹ (նաև՝ գրախոսել)⁵⁰, Ա. Սարգսյանի և Շողեր Մինասյանի «Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան»⁵¹ բառարանները, Լուսինե Մարգարյանի «Արցախի բանահյուսության լեզուն»⁵², Երիզավետա Միրզոյանի «Տմբլաչի ինչպե՞սի «Զուռնա-Տմբլաչի» լեզվական արվեստը»⁵³ ուսումնասիրությունները, ղեկավարել և ընդգրկմախոսել Ղարաբաղի բարբառին վերաբերող թեկնածուական ատենախոսություններ և այլն:

⁴¹ Ա ճ ա ո յ ա ն. 1954, էջ 183:

⁴² Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2023բ, էջ 22:

⁴³ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2021, 79, 2024, 37:

⁴⁴ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 146:

⁴⁵ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2021, 80:

⁴⁶ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 36:

⁴⁷ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1977, 145, 2021, 82, 2024, 38–39:

⁴⁸ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 39–42:

⁴⁹ Ս ա Ր Գ Ս Յ Ա Ն. 2013:

⁵⁰ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2013, 176–177:

⁵¹ Ս ա Ր Գ Ս Յ Ա Ն, Մ ի ն ա Ս Յ Ա Ն. 2017:

⁵² Մ ա Ր Գ ա Ր Յ Ա Ն. 2011:

⁵³ Մ ի Ր Գ ո յ ա ն. 2007:

Եզրակացություն

1. Լ. Հովհաննիսյանի՝ Ղարաբաղի բարբառին նվիրված ուսումնասիրությունների նպատակն է բարբառի հնաբանությունների, գրաբարի ու բարբառի առնչության միջոցով ապացուցել Արցախի հայախոս բնակչության վաղնջական ժամանակներից գոյություն ունենալն իր պատմական հայրենիքում:

2. Բարբառի հնչյունափոխական ամենաբնորոշ երևույթը նա համարում է բառասկզբի դիրքում ձայնեղների խլացումն ու չնչեղ խլացումը՝ վերջինը համարելով փոխազդեցական հնչյունափոխության կամ փոխառյալ լինելու գործոնով պայմանավորված չեղում: Հնչյունական որոշ իրողություններ հեղինակը համարում է հնագույն բարբառային արտահայտություններ, որոնք կարող են լինել երկու տեսակի՝ գրաբարում ավանդված զուգահեռ ձևերից մեկի առկայությունը և գրաբարում չավանդված հնդեվրոպական արտահայտություններ:

3. Որպես Ղարաբաղի բարբառի վաղնջականության ապացույց՝ Լ. Հովհաննիսյանը բերում է գրաբարում չավանդված ձայնդարձը, գրաբարի արտասանությունը հարազատորեն պահած մի շարք բառեր, ստուգաբանությունների միջոցով լրացնում է հնդեվրոպական ծագում ունեցող, բայց գրաբարում չվկայված բառերի ու բարբառի իրանական փոխառությունների շարքերը: Գրաբար-բարբառ համապատասխան իրողությունների զուգադրական քննությունը բացահայտում է բարբառի մի շարք բառակազմական հնաբանություններ՝ նախդիրներով որոշ կազմություններ, վերջնահանգ ն-ով կազմություններ և այլն:

4. Հաշվի առնելով, որ տարբեր լեզուների ու լեզվի տարբեր շրջանների ընդհանրությունների գոյության լավագույն փաստերը քերականական իրողություններն են՝ հեղինակը քննում է բարբառի գրաբարի հետ ունեցած քերականական ընդհանրությունները՝ անձնեական թվականներ, ցուցական դերանուններ, գործիական հոլովի կազմություն, այլաձև հոլովում, անկանոն խոնարհում, դերբայական ընդհանուր վերջավորություններ և այլն:

5. Լ. Հովհաննիսյանի բարբառին նվիրված ուսումնասիրություններն ունեն մեկ հստակ միտում՝ լեզվական փաստերի միջոցով ապացուցել, որ Արցախ-Սյունիքում հայերենը սկսել է գործածվել հայ տարրերի կազմավորման ընթացքին զուգահեռ և ենթարկվելով զգալի փոփոխությունների՝ այժմ գոյություն ունի մի վիճակով, որ կոչվում է Ղարաբաղի (Արցախի) բարբառ:

Արմեն Սարգսյան – բ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի առաջ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ բարբառագիտություն, հայ բանահյուսություն և բանագիտություն, հայ ազգագրություն: Համահեղինակ է 3 ուսումնամեթոդական ձեռնարկի, հեղինակ՝ 36 գրքի և շուրջ 60 հոդվածի: ORCID:0009-0002-5556-8165. armenn.sargsyann1968@gmail.com

Շողեր Մինասյան – բ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայոց լեզվի բաժնի առաջ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն, բա-

ռազիտություն, դարձվածաբանություն, ձևաբանություն, չարահայտություն, հայ բարբառաբանություն: Համահեղինակ է 3 ուսումնասիրվողական ձեռնարկի և 3 գրքի, հեղինակ 3 գրքի և շուրջ 30 հոդվածի:
ORCID:0009-0003-5923-4020. sogerminasyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղաբեկյան Մ. 2010, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն. – «Հայերենի բարբառագիտական ատլաս», պրակ 3, Երևան, «Նաիրի», էջ 54–165:

Աճառյան Հր. 1940, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 358 էջ:

Աճառյան Հր. 1954, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, 478 էջ:

Խաչատրյան Գ. 2014, Բազմավաստակ հայագետը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Շահենի Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակի առթիվ). – ՊԲՀ, № 2, էջ 232–236:

Հովհաննիսյան Լ. 1977, Գրաբարի եւ Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջը. – ՊԲՀ, № 1, էջ 141–152:

Հովհաննիսյան Լ. 1979, Բառային հնաբանություններ Ղարաբաղի բարբառում. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 9, էջ 52–60:

Հովհաննիսյան Լ. 1990, Ղարաբաղի բարբառում իրանական մի քանի փոխառությունների մասին. – ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 11, էջ 65–70:

Հովհաննիսյան Լ. 1999, Բարբառային մի քանի բառերի քննություն. – ՊԲՀ, № 2–3, էջ 283–287:

Հովհաննիսյան Լ. 2000, Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 117–122:

Հովհաննիսյան Լ. 2013, Արժանի ներդրում հայ բառարանագրության պատմության մեջ. – ԱրՊՀ գիտական տեղեկագիր, № 2, էջ 176–177:

Հովհաննիսյան Լ. 2014, Ղարաբաղի բարբառում միջին իրանական լեզուներից կատարված մի քանի փոխառությունների շուրջ. – «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողով, 8–9 հոկտեմբերի, 2014 թ.. Ջեկուցումների ժողովածու», Երևան, «Գիտություն», էջ 62–67:

Հովհաննիսյան Լ. 2017, Դիտարկումներ Ղարաբաղի բարբառի բաղաձայնական համակարգի վերաբերյալ. – «Ջահուկյանական ընթերցումներ. Միջազգային գիտաժողով. Երևան, հունիսի 15–16, 2017. Ջեկուցումների ժողովածու», Երևան, «Գիտություն», էջ 206–210:

Հովհաննիսյան Լ. 2020, Ղարաբաղի (Արցախի) բարբառի բառակազմական հնաբանությունները. – «Ջահուկյանական ընթերցումներ. Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայերենագիտական առջանց գիտաժողովի նյութեր (Երևան, 2020 թ., դեկտեմբերի 17–18)», Երևան, «Գիտություն», էջ 100–106:

Հովհաննիսյան Լ. 2021, Ղարաբաղի (Արցախի) բարբառի բայական հնաբանությունները. – «Ջահուկյանական ընթերցումներ», № 1, Երևան, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատ., էջ 79–83:

Հովհաննիսյան Լ. 2022, Թվականների հնաբանություններ Ղարաբաղի (Արցախի) բարբառում. – «Ջահուկյանական ընթերցումներ», № 1–2, Երևան, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատ., էջ 67–73:

Հովհաննիսյան Լ. 2023ա, Ղարաբաղի (Արցախի) բարբառի գործիական հոլովի շուրջ. – «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողովի նյութեր (Երևան, 2023, նոյեմբերի 2–3), Երևան, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատ., էջ 19–20:

Հովհաննիսյան Լ. 2023բ, Ղարաբաղի (Արցախի) բարբառի ցուցական դերանունները. – «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողովի նյութեր (Երևան, 2023, նոյեմբերի 2–3), Երևան, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատ., էջ 121–122:

Հովհաննիսյան Լ. 2023գ, Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի ստուգաբանություն. – «Ջահուկյանական ընթերցումներ», № 1, Երևան, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատ., էջ 45–49:

Հովհաննիսյան Լ. 2024, Արցախի (Ղարաբաղի) բարբառի հնաբանությունները, Երևան, «Արմավ», 72 էջ:

Մարգարյան Լ. 2011, Արցախի բանախյուսության լեզուն, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս», 144 էջ:

Միրզոյան Ե. 2007, Տմբլաչի Խաչանի «Ջուռնա-Տմբլաչի» լեզվական արվեստը, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս», 184 էջ:

Ջահուկյան Գ. 1972, Հայ բարբառագիտության ներածություն (Վիճակագրական բարբառագիտություն), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 348 էջ:

Սարգսյան Ա. 2013, Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ», 846 էջ:

Սարգսյան Ա., Մինասյան Շ. 2017, Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ», 568 էջ:

ИЗУЧЕНИЕ КАРАБАХСКОГО (АРЦАХСКОГО) ДИАЛЕКТА В ИССЛЕДОВАНИЯХ ЛАВРЕНТИЯ ОВАННИСЯНА

АРМЕН САРКИСЯН, ШОГЕР МИНАСЯН

Резюме

Ключевые слова: Карабахский (Арцахский) диалект, Л. Ованнисян, классический армянский, иранские языки, фонетическая система, лексика, грамматическая система, заимствования, этимология, архаизмы.

Современный армянский лингвист, доктор филологических наук, профессор, член-корреспондент Национальной академии наук Армении Лаврентий Ованнисян является автором ряда научных работ, посвященных Карабахскому (Арцахскому) диалекту, в которых он исследовал фонетические, лексические и грамматические архаизмы диалекта, с целью доказать существование с древних времен армянского населения в Арцахе. Среди наиболее характерных фонетических явлений он выделяет оглушение начальных звонких согласных из классического армянского, в некоторых случаях аспирацию и палатализацию этих согласных, что он не связывает с тюркским влиянием, отсутствие звука *փ* и наличие окситонического ударения. Лингвист классифицирует лексические архаизмы, разделяя их

на две группы: не зафиксированные в классическом армянском (например, аблаут) и унаследованные из классического армянского. Через обширный этимологический анализ ученый расширяет список слов индоевропейского происхождения, не зафиксированных в классическом армянском, а также заимствований иранского происхождения. Согласно его исследованиям, грамматические архаизмы в основном связаны с собирательными числительными, указательными местоимениями и некоторыми явлениями в системах склонения и спряжения. Лаврентий Ованнисян также выполнил другие работы, связанные с Карабахским диалектом: редактировал словари и исследования, руководил и оппонировал кандидатские диссертации.

Армен Саркисян – к. филол. н., доцент, научный сотрудник отдела фольклористики Института археологии и этнографии НАН РА, старший научный сотрудник отдела диалектологии Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: армянская диалектология, армянский фольклор и фольклористика, армянская этнография. Соавтор 3 учебно-методических пособий, автор 36 книг и около 60 статей. ORCID:0009-0002-5556-8165. armenn.sargsyann1968@gmail.com

Шогер Минасян – к. филол. н., доцент, старший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: фонетика, лексикология, фразеология, морфология, синтаксис современного армянского языка, армянская диалектология. Соавтор 3 учебно-методических пособий, 3 книг, автор 3 книг и около 30 статей. ORCID:0009-0003-5923-4020. sogerminasyan@gmail.com

LAVRENTI HOVHANNISYAN'S RESEARCH ON THE DIALECT OF KARABAKH (ARTSAKH)

ARMEN SARGSYAN, SHOGHER MINASYAN

Summary

Keywords: Karabakh (Artsakh) dialect, L. Hovhannisyann, Classical Armenian, Iranian languages, phonetic system, lexis, grammatical system, loanwords, etymology, archaisms.

Lavrenti Hovhannisyann, contemporary Armenian linguist, Doctor of Philology, Professor, Corresponding Member of the National Academy of Sciences of Armenia, has authored a series of scientific works dedicated to the Karabakh dialect. In his works, he has examined the archaic phonetical, lexical, and grammatical features of the dialect in order to prove the existence of the Armenian population in Artsakh since ancient times. Among the most characteristic phonetic phenomena, he highlights the deafening of the initial voiced consonants in Classical Armenian, in some cases aspiration and palatalization of these consonants, which

he does not associate with Turkic influence, the absence of the “f” sound and the presence of oxytonic stress. The linguist classifies lexical archaisms into two groups: those not recorded in Classical Armenian (e.g. ablaut) and those inherited from Classical Armenian. Through extensive etymological analysis, the scientist expands the list of words of Indo-European origin that are not recorded in Classical Armenian, as well as loanwords of Iranian origin. According to his research, grammatical archaisms mainly relate to collective numerals, demonstrative pronouns, and some phenomena in the declension and conjugation systems. Lavrenti Hovhannisyan also carried out other works related to the Karabakh dialect: edited dictionaries and other research works, supervised and opposed doctoral dissertations.

Armen Sargsyan – Candidate of Philological Sciences, Associate Professor, Researcher at the Department of Folklore Studies of the Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, Senior Researcher at the Dialectology Department of the Institute of Language after H. Acharyan of the NAS RA. Scientific interests: Armenian dialectology, Armenian folklore and folklore studies, Armenian ethnography. Coauthor of 3 guidance manuals, author of 36 books, and about 60 articles. ORCID:0009-0002-5556-8165. armenn.sargsyann1968@gmail.com

Shogher Minasyan – Candidate of Philological Sciences, Associate Professor, Senior Researcher at the Department of Modern Armenian Language of the Institute of Language after H. Acharyan of the NAS RA. Scientific interests: phonetics, lexicology, phraseology, morphology, syntax of the Modern Armenian language, Armenian dialectology. Coauthor of 3 guidance manuals and 3 books, author of 3 books and about 30 articles. ORCID:0009-0003-5923-4020. sogerminasyan@gmail.com